Կարգապահական գործ թիվ ԿԳ-18008

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 259-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/203-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԼԻՊԱՐԻՏ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Արայիկ Ղազարյանի, **Խորհրդի անդամներ**՝ Կարապետ Աղաջանյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Լիպարիտ Սիմոնյանին (արտոնագիր թիվ 37) **(այսուհետ նաև՝ Պատասխանող)**, կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքերը.</u>**

15.01.2018թ-ին Պալատում մուտքագրվել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի **(այսուհետ նաև՝ Դիմող կամ Դատարան)** դատավոր Ա. Օհանյանի «ՀՀ փաստաբանների պալատ դիմելու մասին» 09.01.2018թ. որոշումը **(այսուհետ՝ Որոշում)** որում նշվել է, որ Դատարանի վարույթում քննվող թիվ ԵԷԴ/0090/01/17 քրեական գործով 09.01.2018 թվականի դատական նիստում Դատարանի կողմից ամբաստանյալ Տիգրան Մանուկյանի նկատմամբ կիրառված դատական սանկցիայի վերաբերյալ հրապարակում անելու, որոշման պատճառաբանությունների վերաբերյալ Դատարանի հայտարարության և դատական նիստի կարգը չխախտելու Դատարանի հորդորների ընթացքում, նախագահողի խոսքին զուգընթաց ժամը 12:13 րոպե 53 վայրկյանին ամբաստանյալ Թորոս Թորոսյանը դատական նիստի դահլիճն առանց նախագահողի թույլտվության լքելուն զուգընթաց և առանց Դատարանի առջև հայտարարությամբ հանդես գալու կարգի պահպանման, դահլիճում տիրող աղմուկի ու իրարանցման մեջ թույլ է տվել **<u>«ես փաստաբանի ծառայությունից հրաժարվում եմ»</u>** արտահայտությունը, իսկ վայրկյաններ անց՝ ժամը 12:14-ին, Դատարանի կողմից բոլոր ամբաստանյալների հետ միասին նիստերի դահլիճից հեռացվելու դատական սանկցիայի է ենթարկվել և հեռացվել է դահլիճից: Դրանից անմիջապես հետո պաշտպան Լիպարիտ Սիմոնյանը հայտարարել

է, որ լքում է նիստերի դահլիճը, քանի որ իր պաշտպանյալը հրաժարվել է իր ծառայություններից:

Ըստ որոշման Դատարանը պարզաբանել է պաշտպանին, որ Թ. Թորոսյանը դատական նիստի դահլիճից հեռացվել է դատական սանկցիայի հիմքով, որպիսի պայմաններում օրենքի ուժով պարտադիր է պաշտպանի մասնակցությանը, և երբ Թ.Թորոսյանը հաջորդ դատական նիստին պատշաճ կարգով կներկայացնի իր հրաժարականը, Դատարանը կքննարկի այն ընդունելու կամ չընդունելու հարցը: Բացի այդ, Դատարանը չի թույլատրել պաշտպանին լքել դատական նիստի դահլիճը, Դատարանը պարզաբանել է, որ այն ինքնակամ լքելու դեպքում ստիպված կլինի կիրառել դատական սանկցիա: Դատարանի պարզաբանումից հետո պաշտպան Լիպարիտ Սիմոնյանը, իր մոտ գտնվող նոթատետրը ցուցադրելով, հայտարարել է, որ նրանում առկա է Թ.Թորոսյանի կողմից իրեն հասցեագրված գրառումն իր ծառայություններից հրաժարվելու վերաբերյալ: Սակայն, Դատարանը կրկին պարզաբանել է, որ որոշակի և պատճառաբանված հրաժարական Թ.Թորոսյանի կողմից չի լսել, պարզաբանումներ չի ստացել դրա դրդապատճառների և պայմանների վերաբերյալ: Դատարանի հորդորներն ու պարզաբանումներն անտեսելով և չենթարկվելով Դատարանի նիստի դահլիճը չլքելու կարգադրությանը՝ պաշտպան Լիպարիտ Սիմոնյանն, ակնհայտ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելով Դատարանի նկատմամբ, ինքնակամ լքել է դատական նիստերի դահլիճը:

Դատարանը, Որոշմամբ վկայակոչելով նշված փաստական հանգամանքը և վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (**այսուհետ նաև՝ ՔԴՕ**) 68-րդ հոսվածի 1-ին մասը և 3-րդ մասի 4-րդ կետը, 69-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը, 2-րդ մասի 8-րդ կետը և 5-րդ մասը, 72-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 73-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերը, 314-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, 314.1-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ դատական օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (**այսուհետ նաև՝ Օրենք**) 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ի կետը, Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագիրք**) 4.1 կետը և Խորհրդի 12.09.2017 թիվ 85-Ա որոշումը գտել է, որ Լիպարիտ Սիմոնյանի նկատմամբ պետք է կիրառվի դատական սանկցիա՝ պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով դիմելով փաստաբանական պալատ:

Դատարանը 09.01.2018թ. կայացրել է «Դատական սանկցիա կիրառելու մասին» որոշում, որով որոշել է ամբաստանյալ Թորոս Գևորգի Թորոսյանի պաշտպան Լիպարիտ Սիմոնյանի նկատմամբ կիրառել դատական սանկցիա՝ պատասխանատվության ենթարկելու համար դիմել Պալատ:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

15.02.2018թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թիվ 45-Ա/ԿԳ-18008 որոշմամբ՝ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Լիպարիտ Սիմոնյանի նկատմամբ՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով:

Կարգապահական գործը 20.02.2018թ. հանձնվել է Պալատի կարգապահական

գործը նախապատրաստող անձ՝ Նարինե Սարգսյանին:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Դիմողը 22.03.2018 թվականին ներկայացրել է թիվ ԵԷԴ/0090/01/17 քրեական գործով 09.01.2018 թվականի դատական նիստի ձայնագրառման կրիչը:

Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի, օրվա և ժամի մասին:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

27.06.2017 թվականին Պալատ է մուտքագրվել Լիպարիտ Սիմոնյանի դիմումը որով վերջինս հայտնել է հետևյալը՝

- Ինքն ամբողջությամբ համաձայն է կարգապահական գործը նախապատրաստող անձ Նարինե Սարգսյանի 20.04.2018թ. եզրակացության հետ:
- Իր կողմից դատական նիստերի դահլիճը լքելը պայմանավորված է եղել իր պաշտպանյալ Թորոս Թորոսյանի կողմից իր ծառայություններից հրաժարվելու հետ: Դատական նիսիտի ժամանակ Թորոս Թորոսյանը հայտարարել է, որ հրաժարվում է իր ծառայություններից (կից ներկայացրել է հրաժարման գրավոր տեքստը) որի մասին իր տեղեկացնելով Դատարանին և ցույց տալով իրենից հրաժարվելու վերաբերյալ ամբաստանյալի գրառումը, դուրս է եկել դատական նիստերի դահլիճից: Ինքը որպես դատավարությանը մասնակից չհանդիսացող անձը պարտավոր չէր գտնվել դատական նիստերի դահլիճում:
- Իր կողմից դատական նիստերի դահլիճից դուրս գալուց հետո դատական նիստի բնականոն ընթացքը չէր կարող խոչընդոտվել, քանի որ ամբաստանյալ Թորոս Թորոսյանի պաշտպան էր հանդիսանում նաև փաստաբան Մուշեղ Շուշանյանը և իր դատական նիստերի դահլիճում չգտնվելու պայմաններում Դատարանը կարող էր շարունակել դատական նիստը:

Պատասխանողը խնդրել է կարճել հարուցված կարգապահական վարույթը: Դիմումում նշել է, նաև, որ չի կարող մասնակցել Խորհրդի նիստին և խնդրել է իր բացակայությամբ քննել գործը:

<u>3.3. Վկաների ցուցմունքները</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. **<u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>**

Նախապատրաստողը 20.04.2018թ. կազմել է եզրակացություն, որի եզրափակիչ մասում նշել է, որ դատական նիստի ձայնագրությունը հետազոտելու դեպքում պարզ է դարձել, որ փաստաբան Լիպարիտ Սիմոնյանը դատական նիստի ժամանակ մինչ դատական դահլիճը լքելը, հայտնել է իր մտադրությունների մասին, հայտնել է, որ իր պաշտպանյալը հրաժարվել է իրենից և իր ծառայություններից, նման պայմաններում ինքը չի կարող գտնվել դատական նիստերի դահլիճում և ցույց է տալիս դատարանին իր մոտ գտնվող նոթատետրում պաշտպանյալի կատարած գրառումը իր ծառայություններից հրաժարվելու վերաբերյալ: Ըստ Նախապատրաստողի պաշտպան Լիպարիտ Սիմոնյանի գործողությունները բխել են իր վստահորդի ցանկությունից և շահերից, նա դատարանում հանդես է գալիս հայտարարությամբ, պարզաբանում է իր վստահորդի ցանկությունը, ցույց է տալիս գրավոր ապացույցը և կատարում այն ինչ գտնում է օրինական և օրենքի սահմաններում: Նախապատրաստողը նշել է, որ Լիպարիտ Սիմոնյանի կողմից Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման փաստը չի հաստատվում գործում առկա ապացույցներով:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 23.04.2018թ.

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 13.09.2018թ. ժամը 19:00-ին, Պալատի վարչական շենքի՝ ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ թիվ 12 սենյակում:

5. **<u>Գործի փաստերը՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>**

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» **(այսուհետ նաև՝ Կարգ)** 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, **հաստատված է համարում հետևյալ փաստերը.**

1. Թիվ ԵԷԴ/0090/01/17 քրեական գործով ամբաստանյալ Թորոս Թորոսյանի պաշտպաններ են հանդիսացել Մուշեղ Շուշանյանը և Լիպարիտ Սիմոնյանը:
2. Թիվ ԵԷԴ/0090/01/17 քրեական գործով 09.01.2018թ. դատական նիստին ներկա են գնվել պաշտպաններ Մուշեղ Շուշանյանը և Լիպարիտ Սիմոնյանը
3. Ամբաստանյալ Թորոս Թորոսյանը 09.01.2018թ. դատական նիստի ժամանակ դատական նիստի դահլիճն առանց նախագահողի թույլտվության լքելուց հայտարարել է, որ հրաժարվում է իր պաշտպանից:
4. Լիպարիտ Սիմոնյանը ներկայացրել է Թորոս Թորոսյանի կողմից հրաժարվելու վերաբերյալ գրառումը:

5. Լիպարիտ Սիմոնյանը հայտարարել է, որ լքում է նիստերի դահլիճը, քանի որ իր պաշտպանյալը հրաժարվել է իր ծառայություններից:
6. Լիպարիտ Սիմոնյանը ներկայացրել է Թորոս Թորոսյանի կողմից հրաժարվելու վերաբերյալ գրառումը:
7. Լիպարիտ Սիմոնյանի կողմից դատական նիստերի դահլիճից դուրս գալուց հետո դատական նիստի բնականոն ընթացքը չէր կարող խոչընդոտվել, քանի որ ամբաստանյալ Թորոս Թորոսյանի պաշտպան էր հանդիսանում նաև փաստաբան Մուշեղ Շուշանյանը և իր դատական նիստերի դահլիճում չգտնվելու պայմաններում Դատարանը կարող էր շարունակել դատական նիստը:

Նշված փաստերը հաստատվում է գործում առկա ապացույցներով, այդ թվում՝ դատական սանկցիա կիրառելու մասին որոշմամբ, դատական նիստի արձանագրության ձայնագրառման կրիչով և Պատասխանողի բացատրությամբ:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Պատասխանող Լիպարիտ Սիմոնյանը փաստաբան է հանդիսանում 19.03.1999թ., և 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 1 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ, որը կարճվել է (որի մեջ չի հաշվարկվում սույն կարգապահական գործը:):

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Լիպարիտ Սիմոնյանի՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման մասով կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով:*

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝ *փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը:*

Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետմիաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:

Այս կանոնը վկայակոչող է և հղում է պարունակում փաստաբանի և դատարանի հարաբերությունները կարգավորվող այլ իրավական ակտին, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *պաշտպանը պարտավոր է՝*

«(…)

2) ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատական նիստը նախագահողի օրինական կարգադրություններին.

3) մինչև ընդմիջում հայտարարելը առանց նախագահողի թույլտվության չլքել դատական նիստերի դահլիճը.

4) դատական նիստում պահպանել կարգուկանոն

(…)»:

Նշված կանոններից հետևում է, որ քրեական գործով պաշտպանն իրավասու չէ առանց նախագահող դատավորի թույլտվության լքել դատական նիստերի դահլիճը: Հետևաբար, այդպիսի վարքագիծ դրսևորած պաշտպանը խախտում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի և Կանոնագրքի 4.1 կետի պահանջները:

Խորհուրդը հիշեցնում է, որ փաստաբանը, ունենալով առանձնահատուկ հասարակական կարգավիճակ, ունի իրավական և բարոյական պարտականությունների լայն շրջանակ: Փաստաբանը՝ որպես իրավապաշտպան գործունեություն իրականացնող անձ, իրավունք ունի և պարտավոր է բարեխղճորեն պաշտպանել իր վստահորդների իրավունքներն ու օրինական շահերը՝ օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով: Հետևաբար փաստաբանի պարտականությունների հասցեատերերը ոչ միայն վստահորդներն են, այլև արդարադատության գործառույթ իրականացնող մարմինները՝ դատարանները: Փաստաբանի այս երկակի կարգավիճակը բխում է Կանոնագրքի 1.1 ենթակետի պահանջներից, որի համաձայն՝ *փաստաբանը կոչված է ծառայել արդարադատության շահերին ինչպես նաև այն իրավունքներին ու արտոնություններին, որոնք նրան վստահել են պաշտպանելու իր վստահորդի շահերը:*

Հաշվի առնելով փաստաբանի գործառույթների և դրանցից բխող պարտականությունների բազմազան բնույթը՝ ՀՀ օրենսդրությամբ և Կանոնագրքով սահմանված են փաստաբանի այն հիմնական պարտականությունները, որոնք նա ունի ինչպես վստահորդի, այնպես էլ՝ դատարանի հետ հարաբերություններում: Մասնավորապես, դատարանի հետ փաստաբանի հարաբերությունների կանոնակարգմանն է նվիրված Կանոնագրքի 4.1 կետը, որը, լինելով բլանկետային իրավադրույթ՝ հղում է պարունակում փաստաբանի և դատարանի հարաբերությունները կարգավորվող այլ իրավական ակտին, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին:

Սույն գործի շրջանակներում իրավական նշանակություն ունեն փաստաբանի հետևյալ դատավարական պարտականությունները՝ ներկայանալ վարույթ իրականացնող մարմնի՝ տվյալ դեպքում՝ դատարանի կանչով, ենթարկվել դատական նիստը նախագահողի

օրինական կարգադրություններին և առանց դատական նիստը նախագահողի թույլտվության՝ չլքել դատարանի դահլիճը, եթե չի հայտարարվել ընդմիջում: Սույն պարտականությունների չկատարումը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.[1]-րդ հոդվածի 1-ին մասի, հանդիսանում է անհարգալից վերաբերմունք դատարանի նկատմամբ:

Փաստաբանի դատավարական պարտականությունները կազմում են նրա իրավական կարգավիճակի կարևոր մասը, քանի որ փաստաբանն ունի կրկնակի առաքելություն՝ մի կողմից պաշտպանել իր վստահորդի շահերն օրենքով չարգելված բոլոր միջոցներով, իսկ մյուս կողմից նպաստել դատարանի կողմից պատշաճ արդարադատության իրականացմանը: Վերջինս կարող է իրացվել, եթե փաստաբանն ըստ պատշաճի պահպանում է դատավարական ընթացակարգի կանոնները, իր վարքագծով նպաստում է դատարանի կողմից գործի արագ և օբյեկտիվ քննությանը: Դա ներառում է նաև փաստաբանի կողմից դատարանի օրինական կարգադրություններին և դատական նիստի սահմանված կարգին անշեղորեն հետևելը՝ այդպիսով դատարանի նկատմամբ ցուցաբերելով հարգանք, որպիսի պարտականությունը նրա վրա դրված է ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, այնպես էլ՝ Կանոնագրքով:

Հատկանշական է, որ նախկինում Պալատի խորհուրդը դատարանի դահլիճն առանց նախագահողի թույլտվության լքելու փաստաբանի վարքագիծը համարել է Կանոնագրքի դրույթներին հակասող: Այսպես, ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը (նախագահող՝ Ռուբեն Սահակյան) 16.11.2009թ. թիվ 29/1-Ա որոշմամբ փաստաբան Սեդա Սաֆարյանին ենթարկել է կարգապահական պատասխանատվության, այն բանի համար, որ փաստաբանը ***«..խոչընդոտել է դատական նիստի բնականոն ընթացքը և առանց նախագահողի թույլտվության լքել է դատական նիստերի դահլիճը: Հետևաբար, նրա արարքում առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի և Պալատի կանոնադրության պահանջների խախտման հատկանիշներ:***»:

Խորհուրդը նմանատիպ դիրքորոշում է արտահայտել նաև 23.11.2012թ. թիվ 22-ԿԳ/1-Ա և 22.02.2013թ. թիվ № 7-ԿԳ/1 Ա որոշումներով:

Այս ընդհանուր մոտեցումից, Պալատի խորհուրդը նախկինում շեղվել է միայն այն դեպքերում, երբ արձանագրել է դահլիճը լքելու ծանրակշիռ պատճառներ: Այսպես՝ ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը (նախագահող՝ Ռուբեն Սահակյան, զեկուցող՝ խորհրդի անդամ Արա Զոհրաբյան) 12.11.2008թ. թիվ 22/11-Ա որոշմամբ փաստաբաններ Արա Զաքարյանի, Արթուր Գրիգորյանի և Դիանա Գրիգորյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել է, ըստ էության, այն հիմքով, որ՝ նշված քրեական գործով դատավորի ոչ օրինական գործողություններն այլընտրանք չեն թողել փաստաբաններին: Պալատի խորհուրդը նշել է հետևյալը՝ «..***Ինչպես կարող է դատավորը կողմերին ուղարկել որոշում, իսկ դրանից մոտ 50 օր անց, երբ համոզվելով, որ ուղարկված որոշումն իր մեջ լուրջ թերություն է պարունակել, հայտարարել, որ իր մոտ այդ նույն ամսաթվով մեկ այլ որոշում էլ կա, սակայն այլ բովանդակությամբ:.. Դատավորի գործողությունների արդյունքում խախտվում են փաստաբանության անկախության և օրինապահության սկզբունքները: Փաստաբանը ստիպված է լինում դահլիճը լքելու միջոցով առարկել դատավորի ոչ օրինական գործողությունների դեմ***:»:

Պալատի խորհուրդը հայտնել է նաև հետևյալ դիրքորոշումը՝ «***Պալատի խորհուրդը միաժամանակ գտնում է, որ փաստաբանները իրավունք չունեն առանց նախագահող դատավորի թույլտվության լքելու դատական նիստերի դահլիճը և պարտավոր են հարգանք դրսևորել դատավորի և դատավարության մյուս մասնակիցների նկատմամբ: Այս մոտեցումից շեղումը կարող է առաջացնել կարգապահական պատասխանատվություն, բացառությամբ, երբ առկա կլինեն ծանրակշիռ պատճառներ:»:***

Պալատի խորհուրդը Պատասխանողի՝ դահլիճը լքելու վարքագիծը քննարկելիս, ուսումնասիրության առարկա է դարձնում նաև այդ վարքագծի դրսևորման պատճառները:

Ինչպես Դատարանն իր որոշման մեջ, այնպես էլ Պատասխանողն իր բացատրությամբ հայտնել է, որ որ փաստաբան Լիպարիտ Սիմոնյանը լքել է դատական նիստերի դահլիճ, քանի որ ամբաստանյալ Թորոս Թորոսյանը իր նկատմամբ սանկցիա կիրառելիս հայտարարել է որ հրաժարվում է իր պաշտպանից :

Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործով պարզման ենթակա է հետևյալ հանգամանքը՝ ***արդյոք փաստաբան Լիպարիտ Սիմոնյանը պարտավոր էր մնալ դատական նիստերի դահլիճում, այն դեպքում, երբ պաշտպանյալը հրաժարվել էր իրենից:***

Պալատի խորհուրդը գտնում է, որ սույն գործի փաստերի լույսի ներքո անհրաժեշտ է նշված կանոնը դիտարկել համակցության մեջ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հետ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝

2. Անձը պաշտպանի իրավավիճակ ձեռք է բերում կասկածյալի կամ մեղադրյալի համաձայնությամբ՝ նրա պաշտպանությունն ստանձնելու պահից: Պաշտպանը պարտավոր է պաշտպանությունն ստանձնելուց հետո այդ մասին անմիջապես տեղյակ պահել քրեական վարույթն իրականացնող մարմնին:

3. Պաշտպանը դադարում է որպես այդպիսին մասնակցել քրեական գործով վարույթին, եթե՝

1) կասկածյալը կամ մեղադրյալը լուծել են նրա հետ ունեցած համաձայնությունը (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝

Քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է՝

8) սանկցիան կիրառելու պահից՝ սույն հոդվածի առաջին մասի 11-րդ կետով նախատեսված դեպքում:

3. Պաշտպան ունենալու՝ կասկածյալի կամ մեղադրյալի արտահայտած ցանկությունը քրեական գործով վարույթին պաշտպանի պարտադիր մասնակցությունը կանխորոշող հանգամանք չէ, եթե նրանք ունեցել են նշանակված պաշտպան, սակայն հայտարարել են պաշտպանից հրաժարվելու մասին, որն ընդունել է քրեական վարույթն իրականացնող մարմինը:

4. Քրեական գործով վարույթին պաշտպանի պարտադիր մասնակցությունն ապահովում է քրեական վարույթն իրականացնող մարմինը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

1. Պաշտպանից հրաժարվելը նշանակում է կասկածյալի կամ մեղադրյալի մտադրությունը՝ իր պաշտպանությունն իրականացնել առանց որևէ պաշտպանի իրավաբանական օգնության: Պաշտպանից հրաժարվելու մասին կասկածյալի կամ մեղադրյալի հայտարարությունն արտացոլվում է արձանագրության մեջ:

2. Պաշտպանից հրաժարվելը քրեական վարույթն իրականացնող մարմինն ընդունում է միայն այն դեպքում, եթե կասկածյալի կամ մեղադրյալի կողմից այդ մասին հայտարարվել է սեփական նախաձեռնությամբ, կամավոր և այն պաշտպանի ներկայությամբ, որը կարող էր նշանակվել կամ նշանակված է պաշտպան: Չի ընդունվում պաշտպանից հրաժարումը, եթե այն հարկադրված է իրավաբանական օգնության վճարման համար միջոցների բացակայությամբ: Սույն օրենսգրքի 69 հոդվածի առաջին մասի 2-5-րդ և 8-րդ կետերով նախատեսված դեպքերում քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի չընդունել պաշտպանից կասկածյալի կամ մեղադրյալի հրաժարվելը և նշանակել պաշտպան կամ պահպանել նշանակված պաշտպանի լիազորությունները:

Ինչպես արդեն նշվեց, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի համաձայն քրեական գործով պաշտպանն իրավասու չէ առանց նախագահող դատավորի թույլտվության լքել դատական նիստերի դահլիճը և հետևաբար, այդպիսի վարքագիծ դրսևորած պաշտպանը խախտում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի և Կանոնագրքի 4.1 կետի պահանջները: Միաժամանակ քրեական դատավարության օրենսգիրքը սահմանում է նաև պաշտպանից հրաժարվելու դեպքերն ու կարգը, ինչպես նաև պարտադիր պաշտպանության ինստիտուտը:

Հարկ ենք համարում նշել, որ ՀՀ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով «Իրավաբանական օգնությունից, այն է՝ պաշտպան ունենալուց կամ նշանակված պաշտպանից հրաժարվելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով թույլատրելի դեպքերին», 29.06.2009թ. թիվ ԵՔՐԴ/0436/01/08 որոշմամբ արձանագրել է, որ *իրավաբանական օգնությունից օգտվելու, այն է՝ պաշտպան ունենալու վերաբերյալ անձի հստակ և կամավոր արտահայտած ցանկությունը պարտադիր է վարույթն իրականացնող մարմնի համար, մասնավորապես նշելով, որ՝ «վարույթն իրականացնող մարմնի կողմից անձի հրաժարումը պետք է ընդունվի միայն այն դեպքում, երբ, հաշվի առնելով անձի տարիքը և հետազոտելով պաշտպանության իրավունքից նրա հրաժարվելու դրդապատճառները, վարույթն իրականացնող մարմինը կգա այն համոզման, որ.*

ա) նման ցանկություն նա հայտնել է ինքնակամ, սեփական նախաձեռնությամբ և այն պարտադրված չէ գործի քննության հանգամանքներով,

բ) նա կարողանում է ամբողջությամբ գիտակցել իր վարքագծի հետևանքները,

գ) անձն ի վիճակի է ինքնուրույն իրականացնել իր պաշտպանությունը»

Գործում առկա ապացույցներով Խորհուրդն հաստատված է համարում, որ Լիպարիտ Սիմոնյանը լքել է դատական նիստերի դահլիճը, քանի որ իր պաշտպանյալը, ինչպես գրավոր, այնպես էլ՝ բանավոր կարգով հայտարարել է, որ հրաժարվում է իրենից:

Չնայած այն հանգամանքին, որ պաշտպանի հրաժարումը պետք է ընդունվեր վարույթն իրականացնող մարմնի կողմից, տվյալ դեպքում՝ դատարանի կողմից, այնուամենայնիվ Խորհուրդը խախտում չի համարում Լիպարիտ Սիմոնյանի կողմից գործի քննությանը չմասնակցելը, քանի որ Թորոս Թորոսյանի պաշտպան է հանդիսացել նաև փաստաբան Մուշեղ Շուշանյանը և վերջինս գտնվել է դատական նիստերի դահլիճում:

Ուստի, Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1.Պալատի նախագահի 15.02.2018թ. թիվ 45-Ա/ԿԳ-18008 որոշմամբ փաստաբան Լիպարիտ Սիմոնյանի (արտոնագիր՝ թիվ 37) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Արայիկ Ղազարյան

13 սեպտեմբերի 2018թ.
թիվ ԿԳ/203-Ա
ք. Երևան